

ՄԱՏԵՄԱՏԻԿԱ 5-րդ ԴԱՍԱՐԱՆ

ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ 2023-2024թ.

Տևողությունը - 2 ժամ 30 րոպե

1. Գրատախտակին շարքով գրված են թվերը. 1 1 1 2 2 2 5 5 5

Նրանց միջև ամենաքիչը քանի՞ «+» նշան պետք է տեղադրել, որպեսզի ստացված արտահայտության արժեքի վերջին թվանշանը լինի 1:

- 1) 2 2) 3 3) 4 4) 5

2. Տիեզերագնացի թռիչքը մեկնարկեց ժամը 20 անց 24 րոպեին: Նրա թռիչքը տևեց 2024 րոպե: Օրվա ո՞ր ժամին նա վայրէջք կատարեց:

- 1) 5 անց 48 րոպե 2) 5 անց 8 րոպե 3) 6 անց 48 րոպե 4) 6 անց 8 րոպե

3. Խանութում կա երկանիվ և եռանիվ հեծանիվներ: Եռանիվ հեծանիվների անիվների քանակը 6 անգամ շատ է երկանիվ հեծանիվների անիվների քանակից: Քանի՞ անգամ է եռանիվ հեծանիվների քանակը շատ երկանիվ հեծանիվների քանակից:

- 1) 5 2) 4 3) 3 4) 2

4. Ամենաշատը քանի՞ երկուշաբթի կարող է լինել զարնան ընթացքում:

- 1) 12 2) 13 3) 14 4) այլ պատասխան

5. Դավիթը թիվը բաժանում է 2-ի և 4-ի, այնուհետև ստացված մնացորդները

գումարում: Ամենաշատը իրարից տարբեր քանի՞ թիվ նա կարող է այդպես ստանալ:

- 1) 6 2) 5 3) 4 4) 3

6. Գտնել այն երկնիշ թվերի քանակը, որոնցից յուրաքանչյուրը առնվազն 3 անգամ փոքր է նույն թվանշաններով, բայց հակառակ կարգով գրված թվից:

- 1) 5 2) 6 3) 7 4) այլ պատասխան

7. Քառակուսին տրոհել են երկու ուղղանկյունների, որոնց պարագծերի գումարը հավասար է 60 սմ-ի: Գտնել այդ ուղղանկյունների մակերեսների գումարը:

- 1) 100 սմ² 2) 144 սմ² 3) 225 սմ² 4) այլ պատասխան

8. Արկղում կա 2 սպիտակ, 5 կարմիր, 8 կանաչ և 11 կապույտ գնդակներ: Առանց նայելու առնվազն քանի՞ գնդակ պետք է հանել արկղից, որ նրանց մեջ լինի որևէ գույնից 4 գնդակ:

- 1) 4 2) 10 3) 12 4) այլ պատասխան

9. Գտնել այն եռանիշ թվերի քանակը, որոնց առաջին թվանշանը բաժանվում է 3-ի, առաջին երկու թվանշաններից կազմած թիվը բաժանվում է 4-ի, իսկ եռանիշ թիվը բաժանվի 5-ի:

1) 6

2) 12

3) 14

4) այլ պատասխան

10. Ֆուտբոլի թիմը խաղացել է 20 խաղ՝ վաստակելով 35 միավոր: Յուրաքանչյուր հաղթանակի համար թիմը ստանում է 3 միավոր, ոչ-ոքիի համար՝ 1, իսկ պարտության համար՝ 0 միավոր: Ամենաշատը քանի՞ պարտություն կարող է ունենալ այդ թիմը:

1) 6

2) 7

3) 8

4) այլ պատասխան

11. Գտնել այն կենտ 7-անիշ թվերի քանակը, որոնք կազմված են 4 հատ 1 և 3 հատ 0 թվանշաններից:

12. 1 խնձորը և 6 սալորը միասին կշռում են այնքան, որքան 3 տանձր: 3 սալորը 1 խնձորից ծանր է 60 գ-ով: Քանի՞ գրամով է խնձորը թեթև տանձից (համարել որ միատեսակ մրգերը ունեն նույն կշիռը):

13. Եթե եռանիշ թվին գումարենք նրա կրկնապատիկը, ապա կստանանք մի եռանիշ թիվ, որի երեք թվանշաններն էլ սկզբնական եռանիշ թվի վերջին թվանշանն է: Գտնել սկզբնական եռանիշ թիվը:

14. 4 կողպեքի բանալիները խառնվել են իրար: Առնվազն քանի՞ ստուգում պետք է կատարել՝ յուրաքանչյուր կողպեքի բանալին վստահաբար իմանալու համար:

15. Մի քանի դասընկերներ միասին մի ամբողջ տորթ են կերել: Ամենաշատը կերել է Աշոտը՝ ամբողջ տորթի $\frac{1}{10}$ մասը, իսկ ամենաքիչը՝ Բագրատը՝ ամբողջ տորթի $\frac{1}{12}$ մասը: Քանի՞ դասընկեր կերան տորթը: